

HAJ ARI



ՀԱՅ ԱՐԻ

ՕՐԿԱՆ ԳՐԱՆՑԱՅԻ ՀԱՅ ՄԿԱՌԻՏՆԵՐՈՒ

ORGANE DES SCOUTS ARMÉNIENS EN FRANCE

Բ. ՏԱՐԻ ԹԻՒ
2-ը ԱՆՆԵ Խ. .

-9-

1930

* * ՅՈՒՆԻՍ * *
* * JUIN * *

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՊԵՏԻՆ ԽՕՍՔԸ	Գ. ՄԵծառուրեան
ԵՐԿՈՒ ՈՒՂԵՐՁ	Պէյտըն Բառուլ
ՄԵՐ ՄԿԱՌԻՏՆԵՐՈՒՆ	Հիւպէրը Մարքին
ՄԿԱՌԻՏԱԿԱՆ ԿԵԱՆՔԸ	Հայ Արփ
ՀԱՅՐԵՆԻՔԻՍ	Ա. Ահարոնեան
ԿԱՊԵՐՈՒ ՄԱՍԻՆ	**
ՄԱՐՄՆԱԿՐԹԱՆՔ	Վ. Մ.
ՄԱՐՄԵԼԻ ՈՒՂԵՐՁԸ	Բ. Գավէզեան

Ա.Ա.Ա.Ա.

Մկառաւական լուրեր

Գիւն է 2.50 ֆրանք

ՀԱԻ ԱՐԻ

REVUE MENSUELLE

Organe de l'association des Scouts Arméniens

Reconue par le Bureau International de Scoutisme

Directeur : KOURKÈNE MEDZADOURIAN



ՕՐԿԱՆ ՖՐԱՆՍՈՅԻ ՀԱՅ ՍԿԱՌԻՏՆԵՐՈՒ ՄՐՈՒԹԵԱՆ

Կը իրաւաբախի ամիսը մէկ անգամ խմբագրական մարմինի մը կողմէ

Քողում և զրամական տուածումներ ընել հետեւալ հասցէին՝

ԳՈՒՐԳԻՆ ՄԵԽԱՏՈՒՐԵԱՆ

3, Rue Gustave Tricard


BAGNEUX (SEINE) FRANCE

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Ֆրանս, Սուրիա և Պաէքաններ տարեկան 25 ֆրանֆ

Ուրիշի երկիրներ , , 2 տոլար

Համը ճենք կը ծախուի 2.50 ֆրանֆ



Բ. ՏԱՐԻ	Ա.ՄԱՍԳԻՐ ՖՐԱՆՍՈՅԻ ՀԱՅ ՍԿԱՌԻՏՆԵՐՈՒ	ՑՈՒՆԻՍ
- 9 -	1930	- 1 -
		ՑՈՒՆԻՍ

ԳԵՏԻՆ ԽՈՍՔԸ

ՄԵՐ ԾՆՈՂՆԵՐՈՒ

Միացեալ Նահանգներու սկառտները գեղեցիկ սպորտին մը ունին։ Ամէն ժաղաքի մէջ ուր սկառտական խումբ մը գոյութիւն ունի, տարին մէկ անգամ կը հաւաքուին սկառտները և իրենց ծնողները ընթրիֆի մը համար և այդ օրը կը կոչուի «ԾՆՈՂՆԵՐՈՒ ՕՐ»։ Այդ տօնին միակ նպատակն է հանդիսաւոր յարգանի մը մասուցանել սկառտ - ծնողներուն (սկառտ ըսելով հասկնանք Երեցներու, Գայլիկներու, Սկառտներու և Արինուշներու ծնողները), որոնցմէ կախուած է սկառտական յայտագրին յաջող գործադրութիւնը։

Մենք ալ արդէն ծրագրած ենք կազմակերպել տարեկան հանդիսաւոր հաստիոյքներ որոնցմէ առաջինը տեղի

պիտի ունենայ այս տարեշրջանին իսկ, բայց առկէ առաջ կը փափազէինք այսօր մեր յարգանքի և երախտագիտութեան խօսքը բերելու մեր սիրելի ծնողներուն որոնք այնքան գիտակցորէն կը հովանաւորեն մեր շարժումը, նոյնիսկ շատ անգամներ դրական կերպով աջակցելու մեզ (ինչպէս հանդէսներու և հաւաքոյքներու կազմակերպում, ևայլն)։ Իրենց անվերապահ համակրանքը մեծ ոյժ մըն է մեզի համար, և շատ անգամներ իրենց լայն վստահութիւնը փրկած է մեր առաջնորդներէն շատերը յուսալքում։ Ամէն անգամ որ կ'ունենանք հանդիսաւոր տարին մը, կամ աշխատանքի հաւաքոյք մը, մեր ծնողները ներկայ են իրենց լայն աջակցութիւնը բերե-

լով : Մայիս 11ի հանդէսին, մեր այն-քանի սիրելի սկաուտ-փայրերէն մին, պարոն Տ. Պ. Պ կ'ըսէր . «մենք միշտ ներկայ ենք ձեր հաւաքոյքներուն, ո-րովհետև կապուած ենք մեր տղոց» : Ես վստահ եմ որ, կարելի է նոյնպէս աւելցնել՝ որովհետև մեր սկաուտ ծնողները կապուած են մեր գործին : Մեզի համար անոնք մեր լաւագոյն նեցուկն են, որովհետև անշահայրներօրէն կը սիրեն մեզ և կը փափագին որ մենք միշտ յաջողինք : Անոնք մեր լաւագոյն պաշտպանն են երբ մեր գործը պէտք ունի պաշտպանուելու, վերջապէս իրենք են առաջին գնահատողները մեր աշխատանքին, որովհետև միայն իրենք են որ ամենամօտ կերպով կը տեսնեն իրենց տղոց նիզերը և կը զգան բոլոր դժուարութիւնները :

«ՀԱՅ ՍԿԱՈՒՏ ԾՆՈՂՆԵՐՈՒ ՕՐԸ» կազմակերպիկ առաջ, որուն ընթացքին մենք պիտի գիտնանք ցոյց տալ ինչպէս որ պէտք է, մեր անհուն երախտագիտութիւններ մեր ծնողներու հանդէպ, մենք փափագեցանք այսօր սա քանի մը տողերով մեր որդիական փոխադարձ գորգուրանքին հաւատիքը տալ մեր սիրելի սկաուտ-ծնողներուն :

ԴԺՈՒԱՐԻՆ ԱՄԻՍ ՄԸ

Յունիսին ամիսը շատ չէ սիրուած մեր սկաուտներէն որովհետև մեր տղոց-


մէն շատերը իրենց դպրոցական աշխատանքներու պատճառաւ չեն կրնար իրենց ուղածին չափ աշխատիլ սկաուտութեան համար : Կը կարծենք որ անհրաժեշտ է որ գոնիկ այդ ամսուայ ընթացքին մեր տղաքը, անգամ մըն ալ իրենց համար աշխատին և իրենց յաջողութիւններով երջանկացած մասնակցին կազմակերպուելիք քանակումներուն որոնք հիմա այնքան ալ հեռու քան:

ՀԱՅ ՌԵՆԱՍԻՌՈՒԹԻՒՆ

Շատերը մեզի հարց կուտան թէ ինչպէս կրնանի օգտակար ըլլալ հայութեան քանի որ միայն տղոց անձնականով կը գրադինք : Կ'ըսեն նոյնպէս թէ թերևս մեր տղաքը անձնասէր դառնան, և արհամարհանք ունենան ուրիշներուն հանդէպ :

Սկաուտները ինքնահաւատն չեն երբեք, իսկ երբ անոնք մէկուսի կ'աշխատին շատ անգամ, ատիկայ պարզապէս աւելի պատրաստուելու համար է՝ ծառայելու Հայրենիքին : Հայ Սկաուտին առաջին պարտականութիւնն է հայրենասէր ըլլալ և երբեք չմոռնալ, որ մեզի պէս տառապած ցեղի մը համար հայրենասիրութիւնը առաջինութիւններուն առաջինն է :

ԳՈՒՐԳԻՆ ՄԵՇԱՏՈՒԹԵԱՆ



ԵՐԿՈՒ ՈՒՂԵՐՁ ՄԵՐ ՍԿԱՈՒԹՆԵՐՈՒԻՆ

Առաջինը կորտ Պէյտըն Բառվէն է, սկաուտ Պետը ,որուն մասին խօսած էինք նախորդ թիւով : Խոկ Երկրորդը Միջազգային Գրասենեալի տնօրէնէն է, մայիս 11ի դաշտահանդէսին առքիւ :

Հարկ կա՞յ լսելու որ այս երկու ուղերձներն ալ մեծ պատիւ են մեր միութեան :



April 1930

THE BOY SCOUTS ASSOCIATION,
25, BUCKINGHAM PALACE ROAD,
LONDON, S. W. 1.

Dear M. Medzadourian

Cordial good wishes to my brother
Scout on the anniversary of St George's Day.

I hope that Scouting is going
already well with you and I wish you
all good Camping

Yours sincerely

Baron Roerich

ԵՒ ՀԻՒՓԵՐԹ ՄԱՍԹԻՆԻՆ

Մայիս 9 1930

Փարփղի Հայ Սկաուտներ Ա. Խումբի հիմնարկութեան նրա տարեդարձին առինց կը գըրկեմ այս սրտազին բարեմադրութեան ուղերձը եւ կը մաղրեմ անոնց շատ երջանկութիւններ սկաուտութեան մեծ խաղին մէջ : Թող անոնք բոլորն ալ մէծնան ըլլալու համար երջանիկ, առողջ եւ օգուակար քաղաքացինք :

ՀԻՒՓԵՐԹ ՄԱՍԹԻՆ

Տնօրէն

BOY SCOUTS INTERNATIONAL BUREAU.

CHAIRMAN: THE RT. HON. LORD BADEN-POWELL, G.C.M.G., G.C.V.O., K.C.B. CHIEF SCOUT.

TELEGRAMS: INTERNATIONAL BUREAU,
SCOUTCRAFT, LONDON.

TELEPHONES: VICTORIA 6634 AND 6635.

DIRECTOR:
HUBERT S. MARTIN, ESQ., C.B.E.

INTERNATIONAL COMMITTEE:
MAJOR W. DE BONNETTEN,
REV. PÉTR J. JACOB,
MAG. DR. R. H. GRANT,
COUNT H. MARTY,
SIR ALFRED PITT,
MR. F. D. PRESTERY,
MR. MORTIMER L. SCHIFF,
DR. K. T. STANLEY,
COUNT P. TELEKI.


25, BUCKINGHAM PALACE ROAD,

LONDON, S.W.1

May 9th. 1930.


On the occasion of the sixth anniversary of the foundation of the Armenian Scouts of Paris I send them this message of cordial goodwill and I wish them every happiness in playing the great game of Scouting. May they all grow up to become happy, healthy, helpful citizens.

Hubert Martin
DIRECTOR.



«The Scouter»

ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ԿԵԱՆՔԸ



ՓԱՐԻԶԻ ՇՐՋԱՆԻ ԴԱՇՏԱՀԱՆԴԵՍԸ

Մայիս 11-ին Փարիզի ըլջանի սկառուտները, գայլիկները և երէցները ունեցան իրենց տարեկան դաշտահանդէսը Փաք տուափ դաշտին վրայ: Օդին աննպաստ ըլլալուն պատճառաւ որոշեցաւ ուրիշ առիթով մը կատարել ծնողներու և բարեկամներու դաշտահանդէսը և միայն սկառուտական հանդիսաւորութիւնները կատարուեցան:

Փարիզի 11-ին Ազգակը խմբակը կը բանակէր արդէն երեկոյեան, իսկ երէցներու խումբը շաբաթ կէս օրէն ի վեր կ'աշխատէր բանակումի պատրաստութեան:

Կիրակի մինչեւ կէս օր տեղի ունեցան բանակումի աշխատանքները. և կը հասնէին Փրանսական սկառուտներու ներկայացուցիչ խումբը, Յոյները, Բոլոնիացիները, Հրեաները և ուրիշ սկառուտական կազմակերպութիւններ:

Հակառակ վատ օդին ծնողքներ և բարեկամներ կը շտապէին նոյնակէս դաշտ:

Ժմ. 2.30 Պիէռլիէն հասու Մ. Marc Sangnier որ երկու ժամ ձամբորդած էր ներկայացին սկառուտներու վրա և առաջ կը համար կազմակերպութիւններ:

Հանդէսը սկսաւ հանդիսաւոր տողանցքով, նախ կը քալէր միութեան դրօշակակիրը, յետոյ Փարիզի 11-ը իր նուազախումբով, Փարիզի 1 ը, դաշլիկները ամբողջական կազմով, Արենուշները և վերջապէս երէցները, ընդամէնը աւելի քան հարիւր: Յետոյ կազմուեցաւ հոկայ ըրջանակ մը օտար սկառուտներով և Հայ Արիներով: Բնդհանուր Պետը խօսեցաւ աղոցը «սովորական» խանդավառութեամբ, որուն պատասխանեցին Արիները «միշտ պատրաստ»ով: Յետոյ խօսք առաւ Մ. Marc Sangnier որ ուղղելով նախ «իր խօսքը իր մեծ բարեկամ Բնդհ. Պետին չորսհաւորեց սա սքանչելի տղաքը» և խօսեցաւ անոնց պարտականութիւններու մասին իրը Հայ քաղաքացիներ և իրը սկառուտները: Մաղթելով անոնց որ շարունակեն այսպէս իրենց աշխատանքը, յոյս յայտնեց որ օրէ օր կը խտանան շարքերը, ու ատոր համար խոստացաւ ինք իր բարեկամներով միասին ընել աւելին քան պարզ բարեկամի մը պարտականութիւնը: Յետոյ հանդէսին իրենց բաժինը բերին երգելով և խաղերով: Գայլիկները ներկայացուցին «Ճանկալաէն» տեսարաններ, երէցները կատարեցին հեծելանիւր հետաքրքրական փորձ մը, Փա-

րիզ 1 ը ցուլի մըցում մը ներկայացուցին, Գաթալան հազուստներով և Փարիզի 11-ը կատարեց բուրգերու և նախական դարմանումի փորձեր:

Պ. Խատիսեանը խօսեցաւ նաև մեծ կորով և ազգային ողի մաղթելով աղոց, և վերջացաւ հաւաքոյթը: Ամբողջ հանդէսի ընթացքին Պ. Կորկանեան շարժանկարեց մեր սկառուտական կազմը և անոր փորձերը:

Հիմա կը մնայ կազմակերպել գեղեցիկ գաշտահանդէսը:

ՀԱՅ ԱՐԻ



Պ. Մարք Սանիէի թերթերէն մին՝ «Le Volontaire» իր մայիս 25-ի թիւին մէջ հետեւալ կիրապով կ'արտայայտուի մայիս 11-ի դաշտահանդէսին մասին.

«Մայիս 11-ի կիրակի օր մէր Հայ Արի բարեկամները իրենց տարեկան դաշտահանդէսը կազմակերպած էին նախագահութեամբ Պ. Մարք Սանիէի: Այս հանդէսին առթիւ հայ Բնդհանուրը Պետ Գուրգէն Մեծասուրեանի կոչին պատասխանած էին զանազան պազերու պատկանող սկառուտներ և գայլիկներ:

ՀԱՅ ԱՐԻՆԵՐԸ ԺՈՒԱՆՎԻԼԻ ՀԱՆԴԻՍԻՒՄ

Մայիս 18-ին Փրանսայի Խնեօնիսք սկառուտները կատարեցին իրենց 19-րդ տարեկան բանակումը ժուանվիլի մէջ, մասնակցութեամբ օտար սկառուտական խումբերու: Այս տարի ալ Հայ Սկառուտներու Միութիւնը պաշտօնապէս հրաւիրուած էր իրը միակ Հայ խական սկառուտական կազմակերպութիւնը:

Հայ Արիները հասան շաբաթ օրուընէ և հաստատեցին իրենց բանակավայրը: Բանակեցին Փարիզի 1 և 11 խումբերը,

«Փամը 2ին տողանցքը սկսաւ: Նախ կուգային Փրանսացիներ, Բոլոնիացիները, յոյները, գայլիկները և հայ սկառուտները որոնք բարեկեցին հայ դրօշակը որ ազատ կերպով կը ծածանէր ասպանջական ֆրանսայի հողին վրայ: Յետոյ Գուրգէն ներկայացուց Մարք Սանիէն, որ խօսք առաւ և ի մէջ այլոց ըստ:

«Սկառուտութիւնը տղայական խաղը չէ միայն այլ միկնոյն ժամանակ բարոյական կրթութեան մեծ դպրոց մը որուն համար կ'աշխատիք դուքք»...

«Դուք հոս հաւաքուած աշխարհի չորս կողմերէն առանց նկատի առնելու սահմանները տողորուած էք միայն եղայրութեան սիրով»:

«Յետոյ սկսաւ խաղերու բաժինը, երդեր ու պարեր, երկու գայլիկի լասով փորձերը ըրբն և յաջողեցան:

«Հաղարումէկ փորձեր եղան բոլորն ալ իրաբմէ հետաքրքրական և հանդէսը վերջացաւ:

«Բ. Պ. ընորհակալութիւն յայտնեց հիւրերուն և ամէն ոք վերադարձաւ ուրախ, մինչդեռ երկինքը կը սկսէր մթնել և իրիկուան խաղաղութիւնը դանդաղ կերպով կ'իջնէր քնացող անտառին վրայ»:

իսկ յաջորդ առաւօտ հասան երէցները և Գայլիկներու խումբը և Հայերուն ընդհանուր թիւը անցաւ 100-ը:

Առաւօտեան հայ բանակավայրը այցելց իւնեաօնիսք սկառուտներու ընդհ. Պետ Կէրէն-Ճէժարտէն որ գնահատեց անգամ մը ևս հայ սկառուտները:

Յետոյ տեղիունեցաւ վօլէ պօլի մըբցում մը հինգ ազգերու միջև (Անգլիացիներ, Յոյներ, Բոլոնիացիներ, Ռուսեր և Հայեր): Վերջին մըցումը կատարեցին Փրանսական Փարիզի 1 և 11 խումբերը: Հայ

դեղեցիկ խաղարկութենէ մը յետոյ Հայշերը շահեցան ընդհանուր մրցումը, ախոյեան հանդիսանալով։ Հայ խումբը հետեւ կաղը ունէր .— Հ. Դերձակեան, Ա. Զամալեան, Ե. Օտապաշեան, Յ. Գալուքեան, Ս. Աֆանասեան և Տ. Թորոսեան։

Կէս օրէ յետոյ բանակալայր այցելեց Պ. Փրանսուա Բօնսէ, Ազգային Տնտեսութեան Նախարար։

Ժմ. Յին այցելեց Հայ բանակալայրը, և հետաքրուելով դանազան հարցեր ուղղեց Հայ Բնէհ։ Պետին հոյ սկառատական կազմակերպութեան չուրջ, և խիստ գոհ մնալով չնորհասրեց Հայ սկառատաները։ Պ. Կէրէն Տէժարտէն շատ զովեստով խօսեցաւ Հայերու մասին։ Նախարարը սեղմեց իմբապետներուն ձեռքը և մեկնեցաւ գոհ կերպով։

Յետոյ Փրանսացի սկառատները ըսկան իրենց յայտագիրը՝ ներկայացնելով սկառատական գործունէութենէն տեսարաններ և խաղեր։ Հանդէսը վերջացաւ 3000 սկառատներու տողանցքով մը, որուն Հոյ Արիները մասնակցեցան նուագախումբով և դրօշակներով։ Ամէն Հայ Արի ձեռքը ունէր պղտիկ հայկական Եռակոյն մը և երբ կ'անցնէին նախարարին առջեէն դրօշակները վեր բարձրացուցած երեք հուռուա արձակեցին անոր ի պատիւ։ Նախարարը և Փրանսացի պետերը խիստ գոհ մնացին այս ցոյցէն։

Հայ Արիները մեկնեցան անդամ մը և չնորհաւորելէ յետոյ Փրանսացի կազմակերպիչներէն, որոնք այնքան կը սիրեն Հայ Արիներու Միութիւնը և կ'օժանդակեն անոր յառաջդիմութեան։

ՀԱՄԱԳՈՒՄԱՐԵՆ ՅԵՏՈՅ



Փարիզի պատուիրակները Բրիվայի մէջ։ Համագումարէն յետոյ կը զբաղին կամուրջ(!)ի մը շինութեամբ։

ՀԱՅՐԵՆԻ ՔԱՅԱՔ

Արմենիա', Արմենիա', ո'վ դու «Հանուրց հիւսիսականաց վեհագոյն»։ Դու որ չորս հազար տարիներից իվեր լոյսի ու ժաղաքակրութեան զահակիրն եղար քո դրախտային բարձրաւանդակների վրայ և Լոյսի սիրուն սուսերամերկ ծառացար համայն Ասիայի բարբարոսութեան դէմ որպէս Պալլա Արենաս, որպէս քո «Մայր Ամենայն զգասոութեանց» Անահիտ

Արմենիա, Արմենիա...
Ո'վ դու սկիզբն իմ բոլոր ուրախու-

թիւնների և իմ բոլոր տրտմութիւնների։

Ո'վ դու աղբիւրն իմ բոլոր յոյսերի, և բոլոր յոյզերի։

Եւ բոլոր իմ բերկրանենների։

Եւ բոլոր իմ խորհուրդների։

Ո'վ իմ պաշտելի Արմենիա։

Ո'վ իմ պաշտելի Արմենիա։

Ա. ԱՀԱՐՈՒՆԵԱՆ

10 մայիս 1930

Սորբոն

ՄԱՀ ԳԼՈՐԳ Ե. ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻՆ

Հայ Եկեղեցին սուզի մէջ է։ Եջմիածնի մէջ վախճանուեցաւ Ամենայն Հայոց Հայրապետը, վշտալի Գէորգ Ե. որ կաթուղիկոսական գահը բարձրացած էր 1911ին։

Ինք նոր ժամանակներու ամենադժբաղդ Հայրապետը եղաւ եւ տեսաւ Հայութեան կրած բոլոր տառապանքները։ Երբեք չլքեց զայն եւ մնաց իր ժողովուրդին հետ, համակերպած եւ անայլություն։ Ներկայ պայմաններու տակ իր մահը իսկական աղէտ մըն է Հայ Եկեղեցիին համար։

Հայ սկառատները որ կը սիրեն ու կը յարգեն Հայ Եկեղեցին խորունկ վշտով է որ կը կրեն Մեծ Հայրապետին սուզը։

ՅՐԻՏԵՕՅ ՆԱՆՍԻՆ

Մայիս 13ին 0սլոի մէջ մեռաւ Տօքթ. Ֆ. Նանսէն, Նորվեկիացի մէծ բնեուախոյզը եւ Հայութեան

ամենամեծ բարեկամը։ Ինք մօտէն կը ճանչնար հայթշուառութիւնը եւ կեանքին վերջին տարիները անցուց ամէն տեղ հայութեան օգնութիւն գտնելու ջանքերով։ Այցելեց Հայաստան, ծանօթացաւ Հայ մանուկին հետ եւ վերադարձաւ մէծ ծրագիրներով, որոնք շատ զեղեցիկ էին, իրազործուելու համար օտարենուն կողմէ։

Ինք մէծ բարեկամ մը եղաւ սկառատներուն եւ անդամ էր Նորվեկիայի սկառատական կազմակերպութեան վարչութեան։ Իր անունով էր որ ծանօթացանք 1929ի ձէմպօրիին Նորվեկիայի ընդհ. պետին հետ որ «սիրեց Հայերը, ինչպէս սիրած պիտի ըլլար զանոնք Նանսէն եթէ տեսած ըլլար ձէմպօրիին»։

Հայ նոր սերունդը մէծ երախտագիտութեամբ պիտի յիշէ անունը այս մէծ մարդասէրին որ գիտցաւ ծառայել նուիրական դատի մը պաշտպանութեան։

ՀԱՅ ԱՐԻ

Կապերու մասին

Մեր սկզբաներուն մասնաւորապէս կը յանձնարաբեմք ուշի ուշով հետևիլ այս նոր կապերու փորձերուն որ կուտանի այսօք: Նկարներուն վրայէն հետմելով և արշաներու ընթացքին փորձելով կարելի է կատարելուրեան հասցնել սկառուտական կրթուրեան այս նիւթն ալ:

«Ամէն սկառուտ պէտք է գիտնայ կապեր շինել: Ասիկա շատ դիւրին բան մը կ'երեւի եւ սակայն կապ շինելու լաւ եւ վատ ձեւերը կան: Սկառուտ մը պէտք է լաւ ձեւերը գիտնայ:

«Շատ անգամներ կը պատահէ որ մարդկային կեանքեր կապի մը լաւ կամ գէշ կերպով շինուած ըլլալէն կախուած են:

«Լաւ շինուած է այն կապը որ կը դիմանայ բոլոր ճիգերուն եւ կարելի է քակել դիւրութեամբ երբ պէտք ըլլայ:

«Գէշ կերպով շինուած է այն կապը որ կը քակուի առաջին իսկ քաշուելուն եւ որ կը վերածուի այն տեսակ թընճուկի մը որ անկարելի կ'ըլլայ քակել»:

Պէտքն ԲԱՐԻ

ՔԱՆԻ ՄԸ ԿԱՐԵՒՈՐ ԿԱՊԵՐ

(Հոս չենի խօսեր Նորըն ծայի կապերուն մասին)

1. ՈՒԹԻ ԶԵՒ ԿԱՊ.— (պատկեր 1) Շատ դիւրութեամբ կը շինուի եւ կը գործածուի շատ բարակ երկու կապեր իրարու միացնելու: Զանոնք քով քովի բերել 15 սնթմ. ի երկարութեամբ եւ հանգուցել ինչպէս մեծ կապ մը:

2. ԶՈՅԴԻ ԱԹՈՒՐ ԿԱՊ.— (պատկ. 2) Նախ պարզ աթուսակապ մը շինել որուն օղակը շատ լայն պէտք է ըլլայ: Յետոյ սկսիլ բ. օղակը շինել (2). Երկու օղակներն ալ լաւ մը սեղմել ջանալով որ միեւնոյն մեծութիւնն ունենան: Այս կապը կը ծառայէ անձ մը վեր քաշելու եւ կամ վարիչեցնելու: Նախընտրելի է պարզ աթուսեկապէն որովհետեւ աւելի հանգիստ կը պատճառէ:

3. ՄԻՋՆԱԿԱՊ.— (Middlemans) (պատկեր 3). Այս կապը կը շինուի առանց ջուտանին ծայրերը ունենալու: Կը գործածուի լեռները մագլցողներուն կողմէ: Ծայրի անցքը մէջքերնին պարզ աթուսկապ մը կ'ընեն, իսկ մէջտեղինները այս կապը:


4. ՍԱՆԴՈՒԽԻ ԿԱՊ (բ. տեսակ) (պատկ. 4) Շատ դիւրութեամբ կը շինուի եւ կը գործածուի ջուտանէ սանդուխներ շինելու:

5. ԱՐՏՈՅՑԻ ԳԼՈՒԽԻ.— (պատկեր 5). Կը գործածուի անշարժ տառկաններու վրայ կապ մը հաստատելու:

6. «ԶՈՒԿԻ ԲԵՐԱՆԵ» (պատկ. 6) կը գործածուի հաստ կապ մը ցեցի մը վրայ հաստատելու երբ քաշուիլը ուղղածիդ է:

7. ԱՆՈՒՈՐԴԻ ԿԱՊ (բ. ձեւ) (պատկ. 7) կը գործածուի կառք մը քաշելու, եւայլն: Օղակը ուսէն կ'անցուի:

8. ԽԱՐԻՍԽԻ ԿԱՊ (պատկ. 8). Կը գործածուի խարիսխ մը ջուտանվ կապելու: Այս կապը շատ հաստատուն է մանաւանդ երբ թրջուած է անկարելի է որ քակուի:



9. ԿՐՈՆԱԿԻՈՐԻ ԿԱՊ (պատկ. 9). Այս կապը կը շինեն կրօնաւորները (Capucineis) իրենց հզուցին ծայրը:

10. ԳԱՒԱՉԱՆԻ ԿԱՊ (պատկ. 10). Կը գործածուի երկու դաշտաններ իրար կապելու հաստ ջուտանի մը միջոցաւ:

ՄԱՐՄՆԱԿՐԹԱՆՔ

ՍԻՐԵՆԻ ՇԱՐԺՈՒՄԸ ԲԱՑ ՕԴԻՆ ՄԵԶ ԱՐԵՒԻՆ
ՏԱԿ. ՕԳՏԱԿԱՐ ՍՓՈՐ ՄԸ

Պատահեր է անշուշտ երբեմն ձեղ, շարունակ: Մաքուր է հոն ջուրը, հայլիի մը նման մաքուր:

Բայց անցեալ օր մաքուր չէին դժբախտաբար ձեր թոքերը երր — այդ աղով օդով — կ'իջնէիք սինէմայի դունէն դուրս:

Անոնք նման էին աւելի աղտոտ ձահճներու քան մաքուր գետակներու: Լեցուն էին անոնք բազմատեսակ և վտանգաւոր մանրէներով ծանրաբեռնուած օդով մը՝ որ կը մնար անշարժայլպէս, չէր նորոգուէր բնաւ: Եւ եթէ նոյնիսկ նորոգուէր ալ պզտիկ չափով մը, այդ կ'ըլլար սրահին ծանրացած և բազմաթիւ անձերու թոքերը քանի մը անդամ այցելած աղտոտ օդովը:

Չեր թոքերուն մէջ անշարժացած այդ ծանր օդը կը թունաւորէր ձերարիւնը, կը նեղէր ձեղ:

Լար էք ըրեր թէ գէշ — այդ չէ որ պիտի ըսեմ:

Բայց ներկայացման աւարտելուն, երր ելեր էք դուրս, իրիկուան զով օդը շատ անդամ չէ ուզեր մանել ձեր թոքերէն ներս: Շունչը պակսեր է պահ մը ձեղ օդը, այդ կենսատու անտեսանլին, հակառակ ձեր բոլոր փորձերուն, յամառեր է չկատարել իր պաշտօնը: Եւ զուք նեղուեր էք ո՛հ, քէն բան մը, բայց նեղուեր էք:

Ու պէտք եղեր է որ առնէք քանի մը հարիւր քայլեր որպէսպի վերստանաք ձեր երիտասարդի կայտառ կերպարանքը:

Պատահեր է անշուշտ երբեմն ձեղ, շարունակ: Մաքուր է հոն ջուրը, հայլիի մը նման մաքուր:

Բայց անցեալ օր մաքուր չէին դժբախտաբար ձեր թոքերը երր — այդ աղով օդով — կ'իջնէիք սինէմայի դունէն դուրս:

Անոնք նման էին աւելի աղտոտ ձահճներու քան մաքուր գետակներու: Լեցուն էին անոնք բազմատեսակ և վտանգաւոր մանրէներով ծանրաբեռնուած օդով մը՝ որ կը մնար անշարժայլպէս, չէր նորոգուէր բնաւ: Եւ եթէ նոյնիսկ նորոգուէր ալ պզտիկ չափով մը, այդ կ'ըլլար սրահին ծանրացած և բազմաթիւ անձերու թոքերը քանի մը անդամ այցելած աղտոտ օդովը:

Չեր թոքերուն մէջ անշարժացած այդ ծանր օդը կը թունաւորէր ձերարիւնը, կը նեղէր ձեղ:

Պէտք եղաւ որ շարժիք:

Պատահեր է անշուշտ օդ թէ ինչ կ'անցնէր կը զառնար այդ միջոցին ձեր թոքերուն մէջ: ի՞նչ վիճակ կը ներկայացնէին ձեր շնչառական գործարանները:

Պատահեր է անշուշտ օդ թէ ինչ պատուի լնթացքին, դաշտերու մէջ անդիպած էք թերեւ ճահճներու: Զուրի անշարժ կոյտեր են ատոնք՝ որոնց մէջ կը լողան դոյնդոյն ու ձեւ միջատներ — բոյն բազմաթիւ հիւանդութիւններու:

Ուրիշ անդամներ տեսած էք նաև աղուոր վտակներ՝ որոնք կը հոսին մին ալ այդ է:

Մարզուելու լաւագոյն կերպերէն մին ալ այդ է:

**

Դժուար է արդարեւ, և ձանձրացուցիչ ալ երբեմն, միշտ մտածել իր մարմնին վրայ:

Ու ա'լ աւելի դժուար է կատարել ամէն օր որոշեալ ժամուն մարմնամարզական մինոյն փորձերը: Թիչ մը չափագանց միօրինակ կը թուին ատոնք, չատ շուտ կը ձանձրանայ տըղան, մանաւանդ երր դանոնք կը կատարէ սենեակի մը մէջ, միայնակ:

Շատ անդամ աշխատութիւնն ալ ամբողջ կ'երթայ պարապ, քանի որ մեծ բան մը չ'արժէր այն մարմնամարզակը՝ որ կը կատարուի չկամութեամբ: Եթէ տղան իր կատարած փորձերուն մէջ չի գտներ որոշ հաճոյք մը, աւելորդ է ստիլել զինքը վերսկսիլ փորձերու: Պիտի կատարէ զանոնք բոլորովին անկանոն կերպով, առանց խանդակապութեան, առանց եռանդի:

Եւ այդպէս կատարուած փորձերէ ալ մեծ օգուտ մը սպասել անինելքութիւն է:

**

Մարմնակրթական փորձ մը, որպէս զի տայ տուաւելագոյն օգուտը, պէտք է կատարուի մեծ խանդակապութեամբ և առանց ձնչումի:

Ուրիմն պէտք է գտնել շարք մը փորձեր զորս կերպելով աղանդ զգայ ճշմարիտ զոհունակութիւն մը, տեսկան հաճոյք մը: Ու նաև՝ այդ փորձերուն չուրջ ստեղծուած ըլլայ խանդակառ մթնոլորտ մը:

Սփորներէն շատեր ահա լայն չափով մը կը զոհունեն այս պայմանները:

Կան մանաւանդ սփորներ — ի՞նչ պէս՝ Փութպօլ և ուրիշ խմբական կարդ մը խաղեր — որոնք ոչ միայն կը լրացնեն վերի պայմանները, ոչ միայն կրնան սատարել Փիղիքական կրթութեան, այլ նաև որոշ չափով մը առիթ կուտան տղուն զարգացնել բա-

րոյական կարգ մը առաւելութիւններ — ինչպէս՝ կամք, պաղարիւնութիւն, անձնագոհութիւն և այլն:

Բայց նոյն այդ սփորները ունին, շատերու համար, իրենց վնասակար կողմերը:

Անոնցմէ ոմանք — Փութպօլ մանաւանդ — կը պահանջեն արդէն բաւական պատրաստուած մարմին մը: Մրցումներու ընթացքին մարմնին զանագան մասերը կ'ենթարկուին բուռն փորձերու և եթէ անոնք Փութպօլ դուրս ուրիշ մարմնամարզական փորձերով չեն զարգացած մասմբ, կը վնասուին բնականարար: Վնասը շատ անդամ ակներե չ'ըլլար, բայց յետագային, մարմնին բնականոն զարգացման ընթացքին, կ'ունենայ իր աննպաստ գերը:

Ուրիմն, երիտասարդ պատանիները մանաւանդ, պէտք է նախ զարգացնեն որոշ չափով մը իրենց մարմինը, մանեկ սփորի բուռն մրցումներու մէջ: Մի՛ մոռնաք որ սփորներէն ոմանք չափագանց մաշեցնող են և վնասակար չպատրաստուած մարմիններու:

Բայց կայ սփոր մը՝ զոր կընաք ընել առանց վախնալու, պայմանաւ որ չչափագանցէք:

Սփորներուն լաւագոյնն է այն, և հիմը միւս բոլորին: Աթէթիսմը — վաղել, ցատկել և նետել:

Եթէ կատարէք մեթոտիկ կերպով այս երեք միասին, կրնաք վատահ ըլլալ որ պիտի զարգացնէք ձեր մարմնին բուռն մասերն ալ առանց բացառութեան: Պիտի ունենաք զորաւոր մկաններ, առողջ թոքեր, զիմացկուն սիրտ մը:

**

Այսօր չպիտի կրնամ երկար խօսիւթիսիմի զանագան փորձերուն մասին:

«Հայ Արի»ի յառաջիկայ թիւին

մէջ կը յուսամ լայնօրէն բացատրէլ մարմնակրթական տեսակէտով այս ամէնէն աւելի օգտակար սփորին դանագան կերպերը:

Բայմ միայն հիմա որ շարաթը առ առաւելն երեք փորձ լիուլի կը բաւեն ձեռք բերելու համար լաւ արդիւնքներ: Իւրաքանչիւր փորձ կը տեէ մօտ կէս ժամ: Այդ կէս ժամուայ ընթացքին կը կատարէք.

Ա.) 400 մէթրի չափ, ոտքին ծայրերուն վրայ դանդաղ վաղք մը: Սկսէլ քալելով, յիտոյ արտացնել քայլերը, տալ վաղքի կերպարանք մը: Առնել համաշափայլը: Այս փորձը սահմանուած է շարժման մէջ դնելու, տաքցնելու ձեր մկանները:

Բ.) Քանի մը ճամբայ ելնել-

ներ (սթարթ) 25-30 մէթրի վրայ:

Գ.) Նիզակ, սկսառակ կամ գունդ—բայց ոչ երեքը միասին:

Դ.) Ցատկելներ—բարձր կամ երկայն:

Ե.) Վաղք մը, կարելի եղածին չափ արագ, 800-1000 մէթրի վրայ:

Զ.) Ոտքին ծայրերուն վրայ 300-400 մէթր քալել:

Իւրաքանչիւր փորձէ վերջ կատարել օդի խոր ներշնչումներ:

Փորձերը լմնալուն, առնել տուշ մը, եթէ կարելի է: Հակառակ պարագային, լաւ մը չորսնել քրտինքը, թաց լաթ մը անցնելով մարմնին վրայէն և լաւ մը շին չոր լաթով մը մարմնին դանալան մասերը: Վ. Մ.



ԵԳԻԹՈՍՈՒԻ ՀԱՅ ՍԿԱՌԵՑՆԵՐԸ 1916 ԻՆ

Ահա նկար մը որ ցոյց կուտայ Հայ Սկառատներու կազմակերպուած խումբ մը, անկախ գործութեամբ եւ շատ հինեն կազմուած, որը սկառատական շիտակ նամբուն վրայ է, եւ ոչ մէկ «մարմնակրթականի» հետ կապ ունի:

Մեր Միութեան նպատակն է համագործակցութիւն ստեղծել բոլոր հայ սկառատական խումբերու միջեւ որոնք կը փափագին կազմակերպուիլ եւ յառաջդիմել:

Մարսէյլ մասնանիւդին ու դերձը

Ֆ. Հայ Սկառատներու Պատգամաւորական ժողովին ընթացքին Մարսէյլի պատուիրակը կարդաց հետևեալ ուղերձը, որը միաձայն զոհունակութիւն պատճառեց բոլոր խմբավետներուն:

Գործն սկսելով ամէն ինչ վերջացած ըլլար սակայն, և հարկ է շարունակ մղում և ուժ տալ անոր, առաջադրուած նպատակին հասնելու և օդատաշատ արդիւնք մը ձեռք բերելու համար:

Այս հիման վրայ, Մարսէյլի Մասնաձիւղի կաբէիքով անհրաժեշտ է մշակել զործունէութեան մանրամասն նախագիծ մը ուր չօշափուած ըլլան բոլոր հնարաւորութիւններն ու դրուարութիւնները:

Այդ նախագիծն իրը գլխաւոր նպատակ պէտք է ընդունի «Հայ Արիներու» շարժումը ընդհանրացնել, այլ խօսքով հայ ժողովուրդի սեփականութիւն զարձնել, իրը իր իսկ ծոցէն ծնունդ առած շարժում մը: Այս նպատակաւ անհրաժեշտ է յամառ ու զօրաւոր բրօրականու մը մղել ըլլայ խօսքով թէ մամուլով: Երբեք առիթը չփախցնել խօսելու այս շարժման վրայ բացարելով մասնաւորապէս ծնողներուն անոր ընծայած բարիքները ու համոզել գանոնք որ իրենց զաւկները սկառատ դարձնեն: Միւս կողմէ մօտենալ պատանիներուն բարեկամաբար տեսակցնել անոնց հետ, ցոյց տալ սկառատին առաւելութիւնները ու անոր վայելած հաճոյքները, որպէսզի դուրս մնացած պատանիները ևս զգան որ իսկապէս սկառատը իրմէ առաւել չնորհք մը ունի և ինք ևս փութայ անոր ընկերանալ:

Գալով գրաւորին, անհրաժեշտ է օգտագործել ըստ կարելույն լայն չտփով, այն թերթերն ու պարբերականները ուրոնք բարեացակամ աչքով կը զիտեն սկառատական շարժումը. գրաւոր հա ալէտք է կրկնել այն բոլորը զոր պիտի ըսուել ծնողքներուն ու պատա-

նիներուն, անշուշտ այս անդամ աւելի փաստացի ու հիմնաւորուած:

Երենալ հրապարակին վրայ և մասնակցիլ այն բոլոր հանդէսներուն որոնք ազգային բնոյթ կը կրեն. այս ձևով հասարակութիւնը աւելի ևս պիտի ծանօթանայ մեր շարժման ու իր համակրանքը օր ըստ օրէ աճի:

Անհրաժեշտ է նաև սերտ յարաբերութիւններ նաև օտար սկառուտական ըջանակներու հետ, ցոյց տալ որ վերջ ի վերջոյ մենք յաւլտենական լացողներ չենք, որ մենք ևս ունինք մեր ուրոյն դիմագիծն ու բարեմասնութիւնները, որոնք մեզ համար ա'յն-

ՄՍԿԵ ԱՆԿԵ


ԿՐՍԵՆ ԹԻ

բապէտուհին ուրբաթ օրուընէ սկսած էր հաւաքել զանոնք:

** Թէ Փարիզի Ա ի Ագելազ խմբակում հասնող երէցները, իրենց ծածկոցները անհետացած դասն . . . թէ այդ ծածկոցները (թւով 6-8) իրացուցուած էին անծանօթ և աներեւոյթ սկառուտի մը կողմէ որուն իմբապետը նոյնիսկ չէր գիտեր իր բանակիւր և թէ վերչապէտ առասուան ժամը 3ին երկար բանակցութիւններէ յետոյ երէցները յաջողեցան ետ ստանալ իրենց ծածկոցները շնորհիւ այդ արժանաւոր նորընծային բարեացակամութեան, որ նկատի առաւ որ դարթնումը 6ին էր:

** Թէ Փարիզի Լ ի Շուն խմբակը սկսած է կարզապահութեան և համեստութեան ախտար խմբակ մը ըլլալ: Եւ թէ անոնց առաջնորդը անծանօթ մը չէ . . .

** Թէ սկառուտ մը Բ. Պ. Պ. ին առաջարկած է իրը Քիմի խաղի առարկայ զործածել Բոլոնիացի սկառուտներու խմբակետը. բայց Բ. Պ. Պ. նկատելով որ այդպիսով 24 առարկաներուն կրկենը կայ այդ սիրելի խմբապետին վրայ, մերժած է այս խելացի առաջարկը:



** Որ նոյն դաշտահանդէսին բոլոր դայլիկները ներկայ էին և փոխ-խըմ-

քան թանկապին են ո'րքան իրենց իւրաքանչիւրին իտէալները:

Ահա սիրելի խմբապետներ, Մարսէյլի Մասնաճիւղի համեստ կարծիքը զոր անշուշտ ի նկատի կ'ունենաք ժողովիդ աշխատանքներուն ընթացքին: Կը սիրենք յուսալ և կը մաղթենք որ նոր բացուող տարեշրջանը ըլլայ բեղմաւուր ու բազմարդիւն: Կրկին յաջողութիւն կը մաղթենք բոլորիդ:

Մարսէյլի Մասնաճիւղ

ի դիմաց Վարիչ Մարմնի՝

(ստոր.) Բ. ԳԱՎԵԶԵՍՆ

ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ ՎԵՐՋ

ՏԵՂԵԿԱԳԻՐ ՓԻՆԱՆՍԱՎԱՆ ՅԱՆՉԱԽՈՒՄԲԻ

(1929)

Յանձնախումբս, Գործադիր իորհուրդի գանձապահի հաշիւները մանրակիւտ ֆնինել յետոյ, գտաւ չափազանց կանոնաւոր:

Նիւրականին վրայ չափազանց մեծնուշում բրած է Հայ Սկառուտներու Ա. մասնակցուրիւնը համշխարհային ձեմպօրիին:

Մ Ո Ւ Տ Ք

Նուիրատուութիւններէ գոյացած	14295.90
Սկառուտներու վնարածը	11498.---
Հանդէսէ, վիճակահանութիւնէ	4329.---
Ինքնուրեան քուղը, առաջ. անդմ. հանակ. ապահովագրքեան	338.25
Զանազան մունիք	226.05
Բարիզի խումբերուն և Գայլիկներու 10%	175.10
Սկառուտին ուղեցոյց	105.---
Պատույ անդամ	100.---

Ընդհ. գումար՝

31067.35

Ե Լ Ք

Ճամբորդութիւն	(Ճէմպօրիի առթիւ)	12575.30
Բանակումներ (,, , ,)	10643.59	
Սկառուտական գոյֆ	5346.90	
Ապահովագրութիւն	708.85	
Թղթեղէն	635.30	
Յայտարարութիւն, քղբակցութիւն	310.55	
Տպագրական ծախս	271.50	
Սկառուտական ձեռական աշխատանքներու համար	184.40	
Նուկ (Գայլիկներու, Երէց Սկառուտներու)	120.---	
Ընդունելութիւն	113.---	

Ընդհ. ելք՝

Գանձի մէջ պատրաստ գումար՝

30909.50

157.85

31067.35
Ամբողջ ծախսերը եղած են Սկառուտական պէտքերու համար, օրինաւոր և ստացագրի դրութեամբ:

Հաշուական տետրը ֆնինուած է ամէն ամիս Գործադիր իորհուրդի կողմէ և վասերացուած:

Յանձնախումբս իր խորին շնորհալութիւնը կը յայտնէ հին Գործադիր իորհուրդի Գանձապահին (Արմիկ Զամալեան) և կը մաղքէ, որ նոր գանձապահն ալ նոյն ոգիով աշխատի և նոյնիքն փայլուն գործունելութիւն մը ունենայ:

Յանձնախումբի անդամներ՝

Ելեմտ. Յանձն. կնիք

Պ. Պայլեան, Հ. Դերձակեան, Վ. Բէզզարեան, Հ. Պագալեան



ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ ՅԵՏՈՅ

Ի պատասխան Հայ Սկառուտներու Միութեան Բ. Պատգ. Ժողովին քուէարկած բանաձեւին, Միջազգային Գրասենեալի տնօրէն Hubert Martin Esq, C. B. E. Ընդհանուր Պետին ուղղած է անձնական նամակ մը որուն մէջ իր սրտագին շնորհակալութիւն ները կը յայտնէ բոլոր պատուիրակներուն Յօդ. 1-ին առքիւ եւ կ'աւելցնէ՝ «Կրնաք միշտ վստահ մնալ որ ես պարզապէս աւելի երջանիկ կը զգամ ինքզինքս, ամէն անդամ որ կրնամ օգտակար ըլլալ ձեր Միութեան»:

Կարելի՞ է ասկէ աւելի ազնիւ կերպով արտայայտուիլ...:

Ապրիլ 11/24ի սպահանդէսը յիս երեկոյեան: Հայ Սկառուտներէի ունեցաւ այս տարի եւս թրանսայի բոլոր Հայ գաղութեներուն կողմէ: Եւ բոլորին ալ Հրաւիրուած էին եւ մասնակցեցան մէր սկառուտները: Փարիզի մէջ միայն Միութեան Բնդէ. Պետը եւ իր օգնականները ներկայ եղան Փքի ժուրնալի հանդիսաւորութեան, սկառուտներու ներկայութիւնը անձրաժեշտ նկատուած ըրլարուն:

Մարսէյլ, Վալանս, Բրիվա, Օպնա, մէր մասնաճիւղերը մասնակցեցան նոյնպէս:

Ա. ԱՀԱՐՈՆԵԱՆԻ ՑՈՒՑԵԱՆՔ

Ա. ԱՀԱՐՈՆԵԱՆԻ ՑՈՒցԵԱՆՔ կատարուեցաւ Սորպոնի մէծ Ամբիթարունին մէջ շարաթ 10 մա-

յիս երեկոյեան: Հայ Սկառուտներու Միութեան Փարիզի շրջանի սկառուտներէն ալ 20 ներկայացուցիչ հրաւիրուած էին եւ մասնակցեցան Հայ մէծ գրագէտին Յորելեանին, գլխաւորութեամբ Բնդէ. Պետին:

Մէր սկառուտներէն Դաւիթ Թուլմասեան որուն մասին խօսած էինք արդէն Յունիս 8/ին Լիօնէն պիտի մեկնի ուրիշ Հինդ գինուրական օդանաւերով դէպի Վէնսէն մասնակցելու համար «Օգանաւերու Ազգային Տօներուն»: Պիտի մասնակցի նույն 800 քիլոմետր շրջանի մրցում՝ ներուն ուրիշ 200 օդանաւորդներու կարգին:

Յաջողութիւն կը մազթենք մէր սիրելի սկառուտին:

Արձակուրդներու պատճառաւ «Հայ Արի» ի թիւ 10 ը կը հրատարակուի Օգոստոս 1 ին:

ԿԲ ՍԻՐԻ՞Ք «ՀԱՅ ԱՐԻ»



ԲԱԶԱԼԵՐԵՑԻՔ ԶԱՅՆ

«ՀԱՅ ԱՐԻ»ի բարեկամ հոչակուած է Պ. Յովսէփի Գալայնեան (Եռկուալիս), որ մինչև հիմա 8 բաժանորդ դտած է «ՀԱՅ ԱՐԻ»ին:

«ՀԱՅ ԱՐԻ»ի բարեկամ հոչակուած էն նաև Պ. Միհաս Ալբումեան (Գալչան) 9 բաժանորդ, Պ. Թ. Մեծատուրեան (Պանեօ) 10 բաժանորդ, Պ. Սեդրակի Գարայէօքեան (Գալչան), Պ. Յ. Արխանլումեան (Նիւ-Եօքը), Պ. Ալանի և Պ. Ահարոնեան (Պուէնոս Այրէս):

ՎՐԻՊԱԿԻ

«Հայ Արի»ի նախորդ թիւին մէջ Ա. Նուրհանի «Եղիպատոսի Հայ Սկառուտները» յօդուածը հետեւալ սխալ շարուածքը ունեցած է.

Ա. Սիւնակ վերջի նաողէն սկսեալ կարդալ «Զեղաւ մէկը, անշուշտ սկառուտիզմը խորապէս հասկցող մը, որ ելլիք ու պոռար թէ «սկառուտիզմը մարմնամարդ չէ»: (Ծնջւ «ծնունդ տալ անարժան ու ապիկար յաջորդող վարիչներու» նախազասութիւնը):

Պ. սիւնակ (Էջ 112) սկառուտիզմը տարրեր սկզբունքներ ունեցաւ իբրև հիմ վատահ քանի որ այդ ընդհանուր ընկերակցութիւնը չպիտի պատուար ունենայ պատերազմներ և չպիտի ծընունի չտայ անարժան ու ապիկար յաջորդող վարիչներու:

Հարցնե՛մք Գահիրէի և Արեխանդրիոյ Հայ Արիներուն թէ միթէ առիթը չէ՝ Ռուսաւորի մէր եղրայրներուն օրինակին հետեւելու և մանելու Հայ Սկառուտներու դրօշակին տակ հայլ:

ՀԱՅ ԱՐԻ